ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԱՊՐԻԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 2.1.6-րդ կետի ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների կիսամյակային (վեց ամսվա) հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.ՀՀ վարչապետի աշխատակազմի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակվել է Պետական գույքի կառավարման հայեցակարգը, որը ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1834-Լ որոշմամբ,

2. Պետական գույքիկառավարման հայեցակարգից բխող և ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մասնակցել եմ ՀՀ վարչապետի աշխատակազմի դիտողությունների և առարկությունների հիման վրա «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Օտարման ենթակա պետական անշարժ գույքի առանց գնային առաջարկների վաճառքը կազմակերպելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1073-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Պետական ոչ

առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի լրամշակմանը: Ընդ որում վերը նված որոշման նախագծերից առաջին երկուսի վերաբերյալ ընդունվել է ՀՀ կառավարության 2020թ-ի մարտի 26-ի N 395-Ն և 2020 թ-ի ապրիլի 9-ի N 544-Ն որոշումները:

3. Մասնակցել եմ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակմանը:

4. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 17-ի N 949-Ն որոշման համաձայն ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին, կազմել եմ և՛ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, և՛ այդ արձանագրություններից բխող եզրակացությունների նախագծերը ու ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

5. Մասնակցել եմ Պետական գույքի 2018-2020թթ եռամյա ծրագրի տարեկան հաշվետվության կազմման աշխատանքներին (որը քննարկվել է ՀՀ կառավարության 2020թ-ի ապրիլի 30-ի նիստում) և պետական գույքի կառավարման նոր 2021-2023թթ ընկած ժամանակահատվածի ծրագրի կազմման վերաբերյալ ներկայացրել եմ մեթոդական բնույթի առաջարկություններ:

6. Մասնակցել եմ պետական գույքի 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրի 2019թ-ի տարեկան հաշվետվության կազմման աշխատանքներին, որը քննարկվել է ՀՀ կառավարության 2020թ-ի ապրիլի 30-ի նիստում:

7. Մասնակցել եմ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությունների իրականացմանը և ներկայացրել համապատասխան առաջարկություններ:

8. Փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ եմ ներկայացրել մի շարք ՀՀ օրենքների նախագծերի և այլ իրավական ակտերի ու մշակված ռազմավարական նախագծերի վերաբերյալ:

9. Կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև մասնակցել եմ պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության գործառույթներին վերաբերվող այլ աշխատանքների կատարմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ**

30.04.2020թ.